

ԺՈՒՌՆԱԿԼԻՍՏԻԿԱ

ՆՈՐ ՄԵՂԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ. ԻՐԱՆԻ ՕՐԻՆԱԿԸ

ՀԱՅԿ ՆԱԶԱՐՅԱՆ

Ավանդական զանգվածային լրատվամիջոցները աստիճանաբար կորցնում են իրենց երբեմնի դերն ու նշանակությունը առօրյա կյանքում և հասարակական կարծիքի ձևավորման գործում: Այսօր արդեն ուշադրության կենտրոնում հայտնվել է նոր մեղիան¹, որը արմատապես փոխել է ժամանակի և տարածության ավանդական ընկալումները հաղորդակցության ոլորտում:

Վերջին տարիներին նոր մեղիայի առանձնահատկությունների ուսումնասիրումը մեծ ուշադրության է արժանացել: Նրա դերի և նշանակության մասին բազմաթիվ աշխատություններ են հրապարակվել: Մասնավորապես, կարելի է առանձնացնել Ջանեթ Մուրրանի և Նիք Մոնթֆորթի «Նոր մեղիայի քրեստոնատիա»² աշխատությունը, որտեղ հեղինակները գիտաքննաբար պարզաբանում են այն ամենը, ինչին առանձնակի ուշադրություն չէին դարձրել նախկինում, և, ինչպես հեղինակներն են նշում, աշխատության նպատակն է եղել հավաքել և մշակել քննադատական կարծիքների, իրադարձությունների և դեպքերի մասին մի ժողովածու՝ բացահայտելու նոր մեղիան: Հիշատակման է արժանի նաև Ռասսել Նեումայի «Մեղիա, տեխնոլոգիա և հասարակություն. մեղիայի տեսության զարգացում»³ գիրքը, որտեղ խոսվում է ժամանակակից ՋԼՄ-ների, հեռահաղորդակցության միջոցների, նրանց ընձեռած հնարավորությունների, կիրառման և ապագայի մասին: Արևմտյան հեղինակներից Լ. Մանովիչը, բնութագրելով նոր մեղիան, նշում է, որ այն հեռահաղորդակցության և տեղեկատվության փոխանցման թվայնացված ձևերի համախումբ է, որտեղ հիմնական միջոցը համացանցն է⁴:

Նոր մեղիայի ընձեռած հնարավորությունները լայնորեն կիրառում են տարբեր պետություններ, հասարակական շերտեր, անհատներ՝ սեփական կամքը թելադրելու, հակառակորդի նկատմամբ տեղեկատվական-հոգեբանական առավելության հասնելու նպատակով: Նոր մեղիան հետևում է

¹ «Նոր մեղիա» հասկացությունը ի հայտ է եկել 20-րդ դարի վերջին տարիներին: Այն հաղորդակցության ինտերակտիվ միջոց է, որը կիրառում է համացանցը՝ ներառելով սոցիալական ցանցեր, տեքստային հաղորդագրություններ, բլոգներ, վիրտուալ աշխարհներ, առցանց (online) հանրագիտարաններ և այլն: Նոր մեղիայի հիմնական գործիք են համակարգիչը և բջջային հեռախոսը, որոնք համացանցին միանալու հնարավորություն ունեն:

² Տե՛ս Janet H. Murra, Montfort N. The New Media Reader, Cambridge, Mass. MIT, 2003:

³ Տե՛ս Russell W. Neuma. Media, Technology, and Society: Theories of Media Evolution, Michigan, 2008:

⁴ Տե՛ս Manovic L. New Media from Borges to HTML, The New Media Reader, Massachusetts, 2003, էջ 15 - 17 http://www.newmediareader.com/book_samples/nmr-intro-manovich-excerpt.pdf.

«հետարդյունաբերական հասարակության»⁵ տրամաբանությանը, որտեղ յուրաքանչյուր մարդ ստեղծում է կյանքի սեփական ոճը, ընտրում է նպատակահարմար միջոցներ և գաղափարախոսություն կամ էլ ստեղծում է անձնական իրականությունը:

Վերջին տարիների փորձը (2008 թ. մարտ ամսին տեղի ունեցած իրադարձությունները մեր հանրապետությունում, 2008 թ. օգոստոսին կովկասյան հնգօրյա պատերազմը, 2009 թ. նախագահական ընտրությունները Իրանում և այլն) ցույց է տալիս նորագույն տեխնոլոգիաների կիրառման, նոր մեդիայի ազդեցության կարևորությունը: Հեռուստատեսության, ռադիոյի, թերթերի և ամսագրերի փոխարեն մարդիկ սկսեցին ուշադրություն դարձնել սոցիալական ցանցերում, բլոգներում եղած նորություններին: Սասնավորապես, արտակարգ իրավիճակների ժամանակ տեղեկատվության հայթայթման հարցում բլոգները աննախադեպ նշանակություն ունեն: 2008 թ. մարտ ամսին ՀՀ-ում հայտարարված արտակարգ իրավիճակի պայմաններում, երբ արգելված էր շատ լրատվամիջոցների գործունեությունը, բլոգները վերածվեցին այլընտրանքային լրատվության միջոցի:

2009 թ. ամռանը Իրանում կայացած նախագահական ընտրությունները և դրան հաջորդող իրադարձությունները տեղեկատվական պատերազմների լավագույն օրինակներից են, որտեղ կիրառվեցին նոր մեդիայի հնարավորությունները: Հենց նոր մեդիան (ինտերնետի և բջջային հեռախոսի հնարավորությունների կիրառմամբ) դարձավ այն կարևոր միջոցը, որը զգալի փոփոխություն մտցրեց ավանդական լրագրության մեջ: Բլոգները, սոցիալական ցանցերը դարձան ինֆորմացիայի աղբյուր, իսկ համացանցը և բջջային հեռախոսը՝ տեղեկատվության հիմնական միջոց: Նոր մեդիայի առավելությունը պարզորոշ արտահայտվեց նրանով, որ հասարակ քաղաքացին կարողացավ հենց իրադարձությունների վայրից շատ արագ ստանալ և փոխանցել հաղորդագրություններ, տեսանյութեր, լուսանկարներ: Այսինքն՝ հասարակ քաղաքացին, «զինված» լինելով բջջային հեռախոսով, իրադարձությունների վայրից կարող է հանպատրաստից ռեպորտաժ ստեղծել և դառնալ ակամա լրագրող:

2009 թ. ամռանը Թեհրանի փողոցներում ընդդիմության և իշխանությունների միջև տեղի ունեցած բախումից հետո իրանցի ակտիվիստները, դժգոհ մնալով տեղական և արտասահմանյան ՋԼՄ-ների լուսաբանումներից, քաղաքացիական-լրագրողական գործունեություն ծավալեցին: Տեղեկատվական շրջափակման պայմաններում նրանք իրադարձությունների վայրից հաղորդագրություններ փոխանցեցին Twitter⁶ և Facebook⁷: Սոցիալական ցանցերի նշանակությունը այնքանով կարևորվեց իրանական իրադարձությունների

⁵ **Иноземцев Л.** Современное постиндустриальное общество: природа, противоречия, перспективы. Человек в постиндустриальной действительности. М., 2000, с. 62, <http://lib.ru/ECONOMY/inozemcev.txt>

⁶ Twitter-ը սոցիալական ցանց է՝ միկրոբլոգինգի ծառայությամբ, որը օգտվողներին թույլ է տալիս ուղարկել և կարդալ հաղորդագրություններ՝ օգտագործելով մակ բջջային հեռախոսի հնարավորությունները (<http://support.twitter.com/entries/14226-how-to-find-your-twitter-short-long-code>):

⁷ Facebook-ը հաղորդագրություններ ուղարկելու և ստանալու, տեղեկատվության փոխանցման և տարածման լայն հնարավորություններով սոցիալական ցանց է. 2010 թ. տվյալներով ունեցել է 500 մլն մասնակից (<http://venturebeat.com/2008/12/18/2008>):

ժամանակահատվածում, որ, երբ Twitter-ը պատրաստվում էր անցկացնել պրոֆիլակտիկ աշխատանքներ, հաշվի առնելով նրա դերը՝ որպես տեղեկատվության աղբյուր, տարածվեցին հաղորդագրություններ, որտեղ դրանից օգտվողները խնդրում էին հետաձգել պրոֆիլակտիկ աշխատանքները⁸:

Այսպիսով, իրանական դեպքերի օրինակով պարզ դարձավ, որ հեռուստատեսությունը և տպագիր մամուլը չկարողացան մրցակցել Twitter-ի և բլոգների հետ և, թերևս, լրագրության պատմության մեջ առաջին անգամ այլընտրանքային էլեկտրոնային լրատվամիջոցները այդքան մեծ մասսայականություն վայելեցին: Շատ անգամ նույնիսկ հայտնի լրատվամիջոցները դիմում էին ոչ ավանդական լրատվամիջոցների տեղեկատվությանը: Իրանական իրադարձությունների լուսաբանման համար հենց բլոգները դարձան այն աղբյուրը («հանգուցային բառերը» Youtube կայքերում, օրինակ՝ Iran, Elections, որոնցից տեղեկություններ քաղեցին համաշխարհային նշանակության լրատվամիջոցները՝ Le Monde, BBC)⁹: Սակայն այս հնարավորությունները միաժամանակ ունեն բացասական կողմեր: Նման դեպքերում ոչ արհեստավարժ տեսանյութերը որակային առումով չի կարելի համեմատել մասնագիտացած լրագրողի պատրաստած տեսանյութերի հետ: Առաջանում է նաև վերահսկողության հարցը: Տեսաբանների կարծիքով, համացանցը այնպիսի երևույթ է, որը հնարավոր չէ վերահսկել, թեև որոշ պետություններում (օրինակ՝ Իրանում, Չինաստանում) սահմանափակվում է սպառողների մուտքը համացանց¹⁰:

Այսօր ոչ միայն Իրանում, այլև ամբողջ աշխարհում նկատվում է ավանդական մամուլի դերի նվազում: 2008 թ. պատերազմը Վրաստանում, Գազայի հատվածում Իսրայելի իրականացրած «Ձուլածո կապար» գործողությունը ցույց տվեցին հակամարտությունների ժամանակ տեղեկատվական պատերազմներում ցանցային տեխնոլոգիաների կարևորությունը: Ս. Մարտիրոսյանը նշում է, որ վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձվում մուլտիմեդիա նյութերի (տեսանյութեր, ձայնագրություններ, լուսանկարներ) օգտագործմանը հակամարտություններում, քանի որ վերջիններիս ազդեցությունը ավելի մեծ է հանրային կարծիքի վրա, քան ավանդական տպագիր մամուլի կամ հեռուստատեսության ազդեցությունը¹¹:

Այսպիսով, տարբեր հակամարտություններում, արտակարգ իրավիճակներում վերոհիշյալ միջոցների կիրառումը թույլ է տալիս.

■ խնայել ժամանակ, քանի որ հաղորդագրությունը փոխանցելու համար երկար ժամանակ չի պահանջվում (օրինակ՝ Twitter-ի կիրառման դեպքում՝ հաղորդագրությունը հայտնվում է ինտերնետում մի քանի վայրկյանում),

⁸ Տե՛ս **Харланов А.** Какую роль Твиттер играет в протестах в Иране. 16.06.2009 <http://twitwi.ru/twitter/iran/>

⁹ Տե՛ս «Выборы в Иране: Интернет-медиа, как средство борьбы за свободу выбора»: <http://habrahabr.ru/blogs/twitter/62316/#habracut>

¹⁰ Տե՛ս **Ա. Սկրոչյան**, Ժռոնալիստիկա (տեսության և պատմության հարցեր), պրակ Ժ, Նոր մեդիան որպես տեղեկատվական պատերազմի հարթակ, Եր., 2009, էջ 69-70:

¹¹ Տե՛ս **Ս. Մարտիրոսյան**, Տեղեկատվական պատերազմում սոցիալական ցանցերի օգտագործումը Իսրայելի կողմից, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2214, 13.04.2009

■ Խնայել գումար, քանի որ չեն պահանջվում մեծ ֆինանսական միջոցներ և ջանքեր հեռահաղորդակցության համար: Բջջային հեռախոսների կիրառմամբ այն շատ մատչելի է: Միաժամանակ լուսանկար կամ տեսանյութ նկարահանելը, հաղորդագրություն ուղարկելը լայնորեն կիրառվում են, և նույնիսկ շարքային քաղաքացին իր բջջային հեռախոսով կարող է ռեպորտաժ վարել դեպքի վայրից,

■ արխիվացնել տեղեկատվությունը՝ հնարավորություն ստեղծելով հետագայում օգտագործելու համար,

■ նման տեղեկատվությունը վերածել կարևոր սկզբնաղբյուրի:

Ուշադրության կենտրոնում հայտնվեցին նաև Youtube¹² կայքերը: Դա հատկապես լայն հնարավորություն ստեղծեց վերբեռնել տեսանյութեր իշխանությունների և ընդդիմության հակամարտության մասին: Հասարակական տարբեր խավերի համար հասանելի դարձան իրադարձությունների վերաբերյալ թարմ տեսանյութեր: Դրանք բոլորը, որ կատարվել էին ոչ արհեստավարժ տեսախցիկներով և բջջային հեռախոսներով, միանգամից ընդգրկվեցին Youtube կայքերում և հասանելի դարձան հարյուրհազարավոր մարդկանց: Օրինակ, եթե որևէ մեկը ցանկանում է դիտել Թեհրանում տեղի ունեցած բախումների վերաբերյալ տեսանյութեր, պարզապես կարող է դրանք մուտքագրել և դիտել:

Իրանում տեղի ունեցող իրադարձությունների ժամանակ սոցիալական ցանցերի հեղինակության աճը հանգեցրեց նաև բացասական հետևանքների: Առիթից օգտվեցին սպամերները և զովագոյային տեղեկատվություն մտցրեցին սոցիալական ցանցեր: Միաժամանակ լայն տարածում ստացան ցանցային վիրուսները: Սոցիալական ցանցերում տեղեկատվության տարածումը զերծ չէր նաև սադրիչ գործողություններից: Մասնավորապես, մեղադրանքներ էին հնչում արտաքին միջամտությունների առումով, որ Twitter ցանցի աշխատանքի միջոցով ապակայունություն տարածող խմբեր են ձևավորվում Իրանում:

Վերջին տարիներին շատ պետություններ հսկայական գումարներ են ներդնում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համար: Սա հատկապես կարևորում են հակամարտող պետությունները: Իրանի խորհրդարանը 2009 թ. 20 մլն դոլար հատկացրեց տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ԱՄՆ-ի և ԱճԼիայի տեղեկատվական գրոհների դեմ պայքարելու համար: 2010 թ. Իրանի հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Ռեզա Թաղիփուրը Ռուսաստան իր այցի ժամանակ հայտնեց, որ 2010 թ. Իրանը տիեզերք կարծակի նոր արբանյակ, որը կծառայի հեռահաղորդակցության ոլորտի զարգացմանը¹³:

Այսպիսով, վերջին տարիների իրադարձություններից հետո ակնհայտ դարձավ նոր մեդիայի ընձեռած հնարավորությունների կարևորությունը: Ուշադրության կենտրոնում հայտնվեցին այլընտրանքային լրատվության

¹² Սա տեսանյութեր ցուցադրելու հնարավորությամբ կայք է, որտեղ վերբեռնվում, արխիվացվում և ցուցադրվում են հիմնականում տեսանյութեր՝ կիրառելով Adobe Flash Video տեխնոլոգիան (<http://en.wikipedia.org/wiki/YouTube>):

¹³ Տե՛ս Islamic Republic of Iran Broadcasting, Իրանը նոր արբանյակ է տիեզերք ուղարկում, http://armenian.irib.ir/index.php?option=com_content&task=view&id=11751&Itemid=13, 26.04. 2010

ձևերը: Նախկինում կիրառվող լրատվական գործընթացը անցում կատարեց նոր համակարգերի՝ օգտագործելով ինտերնետը, մոբայլ-տեխնոլոգիաները: Թեև նոր մեդիայի կիրառումը որոշ բացասական հետևանքներ ունի, այնուամենայնիվ նրա ընձեռած հնարավորությունները դրական երևույթ են տեղեկատվության ոլորտում:

ГАЙК НАЗАРЯН – Особенности новых медиа в информационной сфере: на примере Ирана. – В наши дни новые медиа изменили восприятие времени и пространства в сфере коммуникаций. Заменяя традиционные методы журналистики, блоги, микроблоги, социальные сети стали важным ресурсом информации. Преимущество новых медиа выразилось в том, что рядовые граждане получили возможность освещать президентские выборы в Иране, отправлять и получать сообщения, фотографии и видео прямо с улиц, где происходили события. Эта информация в течение нескольких секунд распространялась по всему миру через глобальную сеть Интернет. Хотя новые средства массовой информации содержат в себе некоторые негативные аспекты, в целом они являют положительный феномен в информационной сфере.

HAYK NAZARYAN – The Peculiarities of the New Media in the Sphere of Information: the Example of Iran. – Nowadays the New Media has changed the perception of time and space in the sphere of communication. Instead of traditional methods of journalism, the blogs, microblogs, social networks have become an important source of information. The advantage of the New Media was simply expressed in the events of Tehran streets after the presidential elections in Iran, when a common citizen was given an opportunity to send and get messages, photos, videos from the streets. This kind of information was spread all over the world within a few seconds through the Internet. Though the use of the New Media had some negative aspects, the opportunities they give is a positive phenomenon in the informational sphere.